



Աուդիո-Վիզուալ  
լրագրողների ասոցիացիա  
Audio-Visual  
reporters' Association



Պայքար: ԳՂ, ք.Երևան, Փայտաբլուր 23/1, քա. 42  
Հարկային կոդ: 00051617  
Հեռախոս: +374 10 265890, +374 91 432312  
Էլ. փոստ: audio.visual@yahoo.com  
Address: 23/1 Papayan str., apt. 42, 0012 Yerevan, RA  
TIN: 00051617  
Phone: +374 10 265890, +374 91 432312  
E-mail: audio.visual@yahoo.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



## ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «Թրաֆիքինգի դեմ պայքարը երիտասարդների նորարարական գաղափարների թիրախում»

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան և ք.Երևան

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ՝ 14.05-2018-13.08.2018

ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 20

### ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկանց թրաֆիքինգը 21-րդ դարի ամենամեծ չարիքներից մեկն է: Մարդկանց թրաֆիքինգի հայաստանյան և միջազգային հետազոտությունները և վերլուծությունները փաստում են, որ թրաֆիքինգին առնչվող դեպքերն այդչափ չէին լինի, եթե թրաֆիքինգի զոհերը վաղ տարիքից տեղեկացված լինեին այդ չարիքի մասին:

ՀՀ Ոստիկանության տվյալներով վերջին հինգ տարում Հայաստանում թրաֆիքինգի կամ շահագործման զոհ են դարձել 51 հոգի, որոնցից 41-ը՝ երիտասարդներ են, 7-ը՝ երեխաներ (անչափահասների պոռնկության և աշխատանքային շահագործում, մուրացկանության մեջ ներգրավում): Հայաստանի նման փոքր երկրի համար այս վիճակագրությունը մտահոգիչ է: Մտահոգիչ է նաև այն փաստը, որ արդեն իսկ թրաֆիքինգի ենթարկված անձինք այնքան էլ տեղեկացված չեն, թե ու՞մ կարելի է դիմել և ի՞նչ աջակցություն ստանալ: Այս առումով ավելի քան կարևորվում է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման և աջակցության տրամադրման մասին հանրության իրազեկության բարձրացումը:

Հիմք ընդունելով այս իրողությունը՝ «Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ-ն ներդրեց դասընթացային մի մոդել, որի հիմնական թեմաներն էին՝

- Մարդկանց թրաֆիքինգ և շահագործում (սահմանում, պատմություն, տեսակներ, պայքարի և աջակցության իրավական դաշտ),
- Կիրերանվտանգություն, մարդկանց հավաքագրման մեխանիզմներ, անձնական տվյալների հավաքագրման և կիրառման գործիքներ,